№ 83 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 4

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆոն № 253.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 4 № 83

Վշտահար Մովսէս Ահարոնեան և Սոֆիա Սարգսեան Ահարոնեանցները զաւակներով, խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին, առաջինները թանգագին որդու, իսկ վերջինները եղբօր

ԲԺԻՇԿ ԱԻԵՏԻՔ ՄՈՎՍԷՍԵԱՆ ԱՀԱՐՈՆԵԱՆՑԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 2-ին երեկոյեան ժամը 9-ին։ Ամփոփը ամեն օր երեկոյեան 7 ժամին (Լերմոնտովսկայա փողոց № 4)։ Յուղարկաւորութիւնը շաբաթ, մայիսի 7-ին, առաւօտեան 10 ժամին դէպի Մօղնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ (Չ. ու.) 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրթութեան գործը մեզանում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասի Փոխարքայի ընդունելութիւնը. Մամուլ. Թատրոն և երաժշտութիւն. «Շարքի-Ռուսի» շուրջը ժղված վէճը. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ՄԵԶԱՆՈՒՄ

Դպրոցական գործը իր ընդարձակ ծաւալով շուտով կը դառնայ մեր հասարակութեան ամենամեծ հոգսերից և պարապմունքներից մէկը։ Կովկասեան փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկով յայտնել էր Պետերբուրգում հայոց հոգևորական պատգամաւորութեանը, որ նա կը զբաղվի հայոց դպրոցական գործի բարեկարգութեան հարցով։ Մեր երկրի հայաբնակ տեղերը, որոնք դպրոցների այնքան մեծ կարօտութիւն ունեն, հնարաւորութիւն կը ստանան կազմակերպելու կրթական գործը, որ միշտ եղել է հայ ժողովրդի ամենասիրելի և էական տենչանքներից մէկը։

Արդէն քանի տարի է անցել այն ժամանակից, երբ Մակար կաթողիկոսի օրով վերաբացվեցին հայոց ծխական դպրոցները որոշ ծրագիրներով, որոնք վաւերացված էին պաշտօնական հաստատութեամբ։ Բացված դպրոցների թիւը աւելի քիչ էր, քան նախկին եղածների թիւը, որովհետև դպրոցներ բանալը այնքան էլ հեշտ գործ չէ և մի անգամ փակվածը վերականգնվում է միայն մի քանի տարիներ անցնելուց յետոյ, իսկ բացի դրանից նոր դպրոցները պարտաւոր էին մի քանի նոր պահանջներ կատարել, որոնք առաջ գոյութիւն չունէին։ Ինչպէս յայտնի է՝ երկրորդ անգամ դպրոցները փակվեցին սրանից մօտ տասը տարի առաջ և մինչև այժմ նրանց մեծագոյն մասը դեռ չէ բացել իր դռները։

Այժմ, երբ նորից յոյսեր են երևացել, որ դպրոցական խնդիրը նպաստաւոր լուծում կը ստանայ, և երբ ամբողջ Ռուսաստանում հերթական է դարձել ժողովրդական ընդհանուր կրթութեան խնդրի գործնական լուծման հարցը, անհրաժեշտ է, որ մենք աւելի մեծ եռանդով և ուշադրութեամբ վերաբերվենք դպրոցական ցանցի կազմակերպութեան գործին։

Մենք քանի տարվայ ընթացքում շատ բան ենք կորցրել և մեր ժողովրդական մասայի մանուկ սերունդը մնացել է զուրկ դպրոցական կրթութիւնից։ Իսկ ներկայ դարում ամեն մի կորցած տարին կրթութեան գործում մի սարսափելի աղէտ է թէ ժողովրդի և թէ ամբողջ պետութեան կեանքի բարոյական հաշուեկշռի և առաջադիմութեան գործի մէջ։

Եթէ մեր մէջ թոյլ է առաջ բերանում մեր կուլտուրական զարգացումը, եթէ չէ նկատվում մեր երկրի մէջ մտաւոր մեծ շարժում, եթէ տպագրական խօսքը, գիրքը, օրագիրը չեն տարածված այն չափով, որ ցանկալի է, եթէ նոյն իսկ նոր կատարելագործված արհեստը մուտք չէ գործել մեր երկրի խորքերը անկասկած, այդտեղ պակաս դեր չէ խաղացել դպրոցական կրթութեան բացակայութիւնը։

Թէ հայ ազգաբնակութեան, թէ մեր ամբողջ Անդրկովկասեան երկրի և թէ պետութեան շահերը պահանջում են, որ ժողովրդական կրթութեան գործը բաւարար լուծում ստանայ իրականութեան մէջ և սկսէ արդիւնաբերել դրական հետևանքներ կեանքի համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

(Պաշտօնական)

Մարտի 5-ին, Նորին Կայսերական Մեծութեան Կովկասեան Փոխարքայ գեներալ-ադիւտանտ, հեծելազօրի-գեներալ կոմս Իլլարիոն Իվանովիչ Վօրոնցով-Դաշկովի Թիֆլիս ժամանելու օրը, տեղական ժամացոյցով ցերեկվայ ժամը 1-ին, Նորին պայծառափայլութեանը դիմաւորելու համար կայարան գալու են. ա) 1. Փոխարքայի Օգնականը և այն բոլոր անձերը, որոնք պէտք է լինեն Նորին պայծառափայլութեան շքախմբում՝ ձիով (այդ անձերին որոշելու է շրջանի շտաբի գլխաւորը). 2) Փոխարքայի խորհրդի անդամները. 3) Փոխարքայի դիւանի կառավարիչը. 4) նոյն դիւանի կառավարչի օգնականը. 5) Փոխարքայի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեան։ 6) Թիֆլիսի նահանգական ազնուականութեան պարագլխի պաշտօնակատարը, Թիֆլիսի ազնուականութեան պատգամաւորների ժողովի պատգամաւորները և գաւառական ազնուականութիւնների Թիֆլիսում ընակվող պարագլուխները և նրանց օգնականները. 7) Քութայիսի ազնուականութեան պարագլուխը. 8) քաղաքագլուխն ուպրաւայի անդամների հետ միասին. 9) վաճառականների և մեշչանների ու արհեստաւորների աւագները։ բ) Նահանգական ազնուականութեան պարագլուխը մի կարճ ճառ կասէ՝ բարիգալուստ մաղթելով։ Թիֆլիսի քաղաքագլուխը աղ ու հաց կը ներկայացնէ և կողջունէ Նորին պայծառափայլութեանը մի կարճ ճառով։ գ) Կայարանից Փոխարքան ձիով անցնելու է Վոկզալնի և Սադովի փողոցներով, Միքայէլեան պրոսպէկտով, Կիրօչնի փողոցով, Վերայի դարիվերով, Գօլովինսկի պրոսպէկտով, Երևանեան հրապարակով, Միջի փողոցով և սիօնի փողոցով դէպի Սիօնի մայր տաճարը, յետոյ Վանքի մայր եկեղեցին, շիաների և սիւննիների մզկիթները և պալատ։ Սիօնի տաճարում հաւաքվելու են զինուորական ծառայութիւնից ազատ այն պաշտօնեաները, որոնք պարտաւոր չեն ներկայանալու պալատում, նոյնպէս և բոլոր քաղաքացիական մասերի պաշտօնեաները, որոնք մինչև VIII աստիճանի պաշտօններ են վարում։ դ) Պալատի առաջ կանգնեցրած կը լինի պատուաւոր պահապան։ ե) Փոխարքայի պալատում Նորին պայծառափայլութեանը ներկայանալու համար հաւաքվելու են. 1) Վրաստանի սրբազան էկզարխը, Վրաստանի սրբազան յաջորդի հետ միասին, Իմէրէթի և Վրաստանի ս. Սինօդի անդամներն ու պրոկուրորը, Թիֆլիսի հոգևոր սեմինարիայի տեսուչը, Սիօնի մայր եկեղեցու աւագ քահանան և Ալէքսանդրօ-Նեվսկու զինուորական տաճարի աւագ-քահանայ Վինոգրադովը։ 2) Հայ-լուսաւորչական թեմական առաջնորդը՝ կոնսիստորիայի անդամներով. 3) Թիֆլիսի աւետարանական-լութերական պաստորը. 4) Կովկասի հոսէական-կաթոլիկների եկեղեցիների վիզիտորը. 5) Կովկասի հայ-կաթոլիկների կառավարիչը. 6) Անդրկովկասի շէյխ-ուլ-իսլամը և մուֆտին, շիա և սիւննի հոգևոր կառավարութիւնների անդամների հետ միասին, և նահանգական մէջլիսների նախագահը. 7) Նորին Կայսերական Մեծութեան արքունիքի պաշտօնեաները. 8) զինուորական գեներալները, առանձին զօրամասերի հրամանատարները, շրջանի շտաբի մասերի գլխաւորները և գլխաւոր շտաբի բոլոր օֆիցէրները, որոնք գտնվում են Թիֆլիսում. 9) խորհրդի անդամները, Կովկասի առանձին վարչութիւնների գլխաւորները, վարչական հիմնարկութիւնների պաշտօնեաները մինչև V աստիճանի պաշտօնեաները հետը հաշուած։ 10) Փոխարքայի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեաները և այն անձինք, որոնք գտնվում են նրա մօտ, տէխնիկական խորհրդակցութիւնը Փոխարքայի վարչութեան մէջ, Փոխարքայի դիւանատան գործավարները և քարտուղարը, տպարանների, վիժագրատների և գրավաճառութեան տեսուչը Թիֆլիսում, հողաչափական բաժանմունքի աւագ երկրաչափները և զինուորա-ժողովրդական դիւանատան բաժինների պետերը. 11) Թիֆլիսի դատաստանական պալատի աւագ նախագահը և պրոկուրորական հսկողութիւնը, դէպարտամենտների նախագահները և պալատի անդամները, նահանգական դատարանի նախագահը, նախագահի օգնականները, անդամները և նահանգական դատարանի պրոկուրորը. 12) Թիֆլիս քաղաքի և Թիֆլիսի բաժնի հաշտարար դատաւորները. 13) Թիֆլիսի նահանգական ազնուականութեան պարագլխի պաշտօնակատարը, Թիֆլիսի ազնուականների դէպուտատների ժողովի պատգամաւորները և գաւառական ազնուականութեան Թիֆլիսում գտնվող պարագլուխները, նոյնպէս և Թիֆլիսի նահանգի ազնուականները. 14) քաղաքագլուխը, ուպրավայի անդամները և դումայի ձայնաւորները, վաճառականութեան ներկայացուցիչները, բանկային և կրէդիտային հիմնարկութիւնների ներկայացուցիչները, գիտական և բարեգործական ընկերութիւնների, կենդանիների ապահովութեան ընկերութեան նախագահները և նրանց օգնականները և տեղական ամսագիրների և լրագիրների խմբագիրները. 15) օտար հիւպատոսները. ե) Ընկերութիւնների, պատգամաւորութիւնների, լրագիրների և ամսագիրների խմբագիրներին ներկայացնում է Նորին պայծառափայլութեան Փոխարքային Թիֆլիսի նահանգապետը։ զ) Փոխարքայի պալատում ներկայացողների համար տեղեր ցոյց տալու պարտականութիւնը դրվում է Նորին պայծառափայլութիւն Փոխարքայի օգնականի ադիւտանտների վրա, յանձնարարութիւնների համար նրանց մօտ գտնվող շտաբ և օբէր-օֆիցէրների և Փոխարքայի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեաների վրա. է) Փոխարքայի անցնելու ճանապարհի վրա, փողոցների և հրապարակի վրա կանգնում են, կօմէնդանտի և ոստիկանապետի ցուցմունքով զօրքեր զէնքով, հեծելազօրքը, հաքարները դրօշակներով և պատգամաւորութիւններ ազգաբնակութիւնից. ը) Փոխարքայի անցնելու ճանապարհի վրա փողոցների զարդարումը դրօշակներով, գորգերով ծաղկափնջերով և կանաչիով, ըստ կարելւոյն, յանձն է առնում, ինչպէս յայտնել է քաղաքագլուխը, քաղաքային հասարակական վարչութիւնը. տանտէրերը հրաւիրվում են զարդարել տները. թ) լրագիրների թղթակիցներին թոյլ է տրվում մտնել կայարան, Թիֆլիսի նահանգապետի առանձին թոյլտուութեամբ. ժ) Բացառապէս տոմսակներով է մուտքը կայարան և պալատ բոլոր հաստատութիւնների անձանց համար. ի) Դէպի վոկզալը և պալատը գնալու համար կառապանները պէտք է առանձին տոմսակ ունենան գլխարկի վրա կպցրած. լ) Քաղաքացիական պաշտօնեաների հագուստի ձևը պէտք է լինի ամառային տօնական։

Այն տիկինները, որոնք կը ցանկան դիմաւորել կայարանում Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի ամուսին կոմտէսի Ելիսաւետա Անդրէեվնա Վօրոնցովա-Դաշկովային, թող բարեհաճեն կայարան մտնելու տոմսակների համար դիմել Փոխարքայի դիւանատունը ցերեկվայ 11-ից մինչև 2 ժամը մայիսի 3-ին և 4-ին։

—

Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարը խնդրում է բարեգործական և գիտական ընկերութիւնների նախագահներին ու օգնականներին և տեղական լրագիրների ու ամսագիրների խմբագիրներին, որոնք պէտք է մայիսի 5-ին ներկայանան Կովկասի Փոխարքային,—պալատ մտնելու տոմսակ ստանալու համար դիմել նահանգապետի դիւանատունը (Ճաւաւածէի և Գրիբոյեդովի փողոցների անկիւնում) երեքշաբթի, մայիսի 3-ին և չորեքշաբթի, մայիսի 4-ին, ցերեկվայ ժամը 12—3-ին։

Ընկերութիւնների նախագահներից և օգնականներից նրանք, որոնք Փոխարքային ներկայանալու են բացի դրանից և իրանց պետական պաշտօնների պատճառով, պէտք է մուտքի տոմսակներ ստանան իրանց իշխանաւորներից։ (Кавказъ)

ՄԱՄՈՒԼ

Կարող ենք շնորհաւորել բագուցիներին. Բագուի զրական-հասարակական գործիչ Աղաեվը վերցրեց իր դիմակը։ Վերջապէս։ Բայց այդ քաղաքացիական առաքինութիւնը կատարելու համար պէտք էր, որ պ. Աղաեվը գնար Պետերբուրգ, տեղաւորվէր այնտեղի լրագիրներից մէկում։ Բագուի մէջ, «Каспій» լրագրում, հասարակական ժողովներում նա շարունակ կեղծում էր, շարունակ դիմակներ էր փոխում, նայելով թէ քամին ինչ է բերում—Վէլիչկօի կտակն արդեօք, թէ եղբայրութեան և քաղաքակրթութեան պատգամը։ Դիմակը պատռելը, իսկական դէմք մերկացնելը այնքան էլ դժուար չէ, բայց Բագուի հասարակութիւնը չը կարողացաւ այդ բանն անել և պ. Աղաեվը ինքը ձեռք բարձրացրեց իր վրա, ինքը մերկացրեց իրան։ Լաւ է ուշ քան երբէք։

«С.-Петерб. Вѣд.» լրագրի մէջ պ. Աղաեվ տպել է մի յօդուած, որով ապացուցանում է թէ Բագուի խայտառակ կոտորածի պատճառը միմիայն... հայերն էին։ Եթէ ուզում էք իմանալ թէ ինչպէս, կարդացէք այն պատմութիւնը, որ ըստ Աղաեվի, պէտք է նախապատրաստող հանգամանք համարել, կոտորածի, այսպէս ասած, սկզբնական հրաւէրը։ Այդ պատմութիւնը կատարվել է Դումայում։ Մահմեդականները այդտեղ ուզում էին հաւասար իրաւունքներ ստանալ, բայց հայ ձայնաւորները ընդդիմանում էին։

Վերջապէս—ասում է Աղաեվը հայերը մեծ ողորմութիւն արին մահմեդականներին. նրանց թոյլ տուին աւելի մեծ թւով մտնել քաղաքային ինքնավարութեան մէջ, բայց յամենայն դէպս ոչ աւելի քան Դումայի կազմի կէսը։ Եւ նոյն իսկ այժմ Բագուի պէս մի քաղաքում, ուր ազգաբնակութեան 75 տոկոսը մահմեդականներ են, իսկ հայերը միայն եկեւոր տարր են, ուր համարեա բոլոր տները, առևտուրը, արդիւնաբերութիւնը (այսպէս է պատմութիւն գրում Աղաեվը) մահմեդականների ձեռքին են, մահմեդականները Դումայում ձայնաւորների միայն կէսն են կազմում, և երբ մահմեդական ձայնաւորներից մէկը նորերս հարց բարձրացրեց Դումայում, թէ պէտք է միջնորդել, որ քաղաքային ինքնավարութիւնների մէջ քրիստոնեաներն ու մահմեդականները հաւասար իրաւունքներ ստանան, երբ նա հաստատեա թէ արտասուքը աչքերում աղաչում էր հայերին ձեռք մեկնել մահմեդականներին, բարձրացնել նրանց, հասցնել իրանց դրութեան, հայերը, ինչպէս մի մարդ, հաւասարեցման դէմ խօսեցին և հայ ձայնաւորներից մէկը խնդրեց մոցնել արձանագրութեան մէջ, որ հարցը անցկացաւ միայն շնորհիւ մահմեդական մեծամասնութեան։ Եւ այսպէս նաև հասարակական ուրիշ բոլոր հիմնարկութիւնների մէջ. բօրսային գրասենեակներում, հասարակական ժողովներում և այլն։

Հայերը այսպէս էին թուրքերի հետ։ Եւ ինչ է հետևում սրանից։ Հին արիւնտա ի-

մաստութիւնը, որ դեռ Ասորեստանի բեռառգիր արձանագրութիւնների միջից այսօր էր բարբառում է. «Ես կոտորեցի, ես քարուքանդ արի, ես այրեցի մարդկանց»։ Նոյն այն մարդասպան իմաստութիւնը, որ հարկադրում էր Զինգիզ-խանին պարծենալ, թէ ինքը մի աշխարհաքանչ մարդ չէ, այլ պարզապէս «Աստուծու պատիժ»։ Հայերը թոյլ չը տուին, որ մահմեդականները շատ լինեն Դումայում, բօրսայում, ժողովարանում և ահա դրանից առաջ եկաւ կոտորածը։ Այս է դուրս գալիս պ. Ագաեվի մթնած լոգիկայից։ Մի բոպէ հաւատա՛ք պ. Աղաեվի այս անմտութեան։ Անմտութիւն ենք ասում այն պատճառով, որ պ. Աղաեվը կամենալով պաշտպանել Բագուի թուրքերին, արջի ծառայութիւն է անում նրանց, քանի որ նրա ասածից դուրս է գալիս թէ թուրքերը կոտորած սկսեցին, որպէս զի շատ տեղեր ստանան, մի բան, որ կարող էր հետաքրքրել միայն ինտելիգենտ թուրքերին, մինչդեռ յայտնի է, որ կոտորողները հասարակութեան տականքներն էին։ Բայց, կրկնում ենք, մի բոպէ հաւատանք այդ անմտութեան։ Եթէ ճիշտ այդ է պատճառը, պէտք էր սպասել, որ թուրքերը կը կոտորեն նոյն իսկ հայերին, որոնք իրանց դուրս էին անում Դումայից, բօրսաներից, գրասենեակներից։ Բայց ինչո՞ւ մոլեվեցին և կրակվեցին անմեղ մանուկներ, հարիւրաւոր խեղճ ու կրակ մըշակներ, ինչո՞ւ կողոպտվեցին անթիւ տներ ու ընտանիքներ։ Ստի պոչը կարճ է լինում, և պ. Աղաեվը մի անգամ էլ անաջող եղաւ իր գըլուխկոնձիների քաղաքականութեան մէջ։

Այնուհետև Աղաեվը դրականապէս ասում է. Կոտորածը սկսեցին հայերը, իսկ մահմեդականները վերջ դրին նրան։

Բերելով այս տողերը, «Новости» լրագիրը շատ իրաւացի նկատում է.

Մի և նոյնը իր ժամանակին ասում էին և սպանված հրէաների մասին։ Դուրս է գալիս, որ այլազգիները Ռուսաստանում իրանք են իրանց մորթում։ Պ. Աղաեվը հաւատացնում է թէ ճշմարտութիւնը աղաւաղել են իրանք իրանց կոտորող հայերը և ռուսաց լրագիրները։

Այո՛, ճիշտ այդպէս էլ դուրս է գալիս Ագաեվի մթնած լոգիկայից։ Հայերը Բագուում մի օր խօսք տուին իրար, եկէք սիմեանց կոտորենք, չը խնայենք ծերերին ու մանուկներին, պատռենք յղի կանանց արգանդները, կենդանի այրենք ամբողջ ընտանիքներ, հարիւր հազարների ապրանք ու հարստութիւն կողոպտենք մեր տներից ու խանութներից, թափենք այդ կողոպուտը թուրքերի տները, որպէս զի լրագիրներում յօդուածներ գրելու նիւթ ունենանք։ Ասացին այդ, սիրահարվեցին այդ մտքի վրա և ահա վեր կացան, չորս օր շարունակ իրար կոտորեցին ու կողոպտեցին, մինչև որ թուրքերը եկան և խաղաղացրին նրանց։—Հրաշալի է պ. Աղաեվը, չէ՞։ Եւ չը կարծէք թէ նա ապայոյցներ չունի։ Որ հայերը ճիշտ որ իրանք իրանց կոտորեցին, որպէս զի լրագիրներում գրելու նիւթ ունենան, երևում է հէնց նրանից, որ կոտորածից յետոյ պ. Աղաեվը «Каспій»-ի մէջ փաբլիսեցիաբար կուրծք ծեծելով հաստատում էր որ ամեն ինչ մոռացութեան տրվի, որ լրագիրները ոչինչ չը խօսեն կոտորածների մասին, որ կոտորողներն ու կոտորվողները իրար ներեն, բայց հայերը չը կատարեցին այդ, այլ ահագին աղմուկ բարձրացրին լրագրութեան մէջ։ Տեսնում էք, սա արդէն պարզ ապացոյց է որ հայերը դիտմամբ իրանց կոտորեցին. եթէ այդպէս չը լինէր, եթէ թուրքերը լինէին կոտորած սկսողները և հայերը անմեղ «գառնուկներ» լինէին, այն ժամանակ նրանք, իհարկէ, կը լռէին և ամբողջ աշխարհի մամուլը այնպէս չը վարվեց, ինչպէս «Каспій» լրագիրը։—Ապացոյցներից ամենագլխաւորն այն է, որ հայերը աղմուկ բարձրացրին—թէ 10—15 հազար մարդ է սպանվել։ Դա հրէշաւոր չափազանցութիւն էր, բացականչում է պ. Աղաեվը։ Եւ ճիշտ չէ մի՞թէ, հայերից ընդամենը մի 300 հոգի է կոտորվել։ Այդ, իհարկէ, մեծ մխիթարութիւն է. չէ՞ որ կարող էին 3000 կոտորել։

Ներեցէք, ընթերցող, այսպէս առաջ գնալով պ. Աղաեվի մթացած լոգիկայի հետ, մենք միայն ծիծաղից ծիծաղ պիտի անցնենք։ Վերջ դնենք այս անմտութիւններին։ Բայց պարտաւոր ենք խոստովանել, որ պ. Աղաեվ այժմ իր իսկական ամպլուայի մէջ է։ Նրան այժմ կարելի է փոքր ի շատէ անկեղծ մարդ համարել։ Վերջին տարիները խեղճ մարդը ընդունել էր մի բոլորովին ծանր, անհամապատասխան դեր և դալարվում էր ամեն տեսակ դիմակաւոր ծամածռութիւնների մէջ։ Այժմ նա վերադարձաւ հին ուղին, այն տըխմար տեղեկութիւնից ամենքին յայտնի է, որ Թիֆլիսում, Մէհմէդ աղա Շահթախթինսկիի խմբագրութեամբ լոյս տեսնող «Շարքի-Ռուս» լրագիրը, կառավարութեան թոյլտուութեամբ տեղափոխվեց Բագու։ «Թաթար» լրագրի խմբագիրը՝ մասնաւորապէս գնացել էր Պետերբուրգ, այդ արտօնութիւնը ձեռք բերելու և իրան ընկերակից—խմբագիր նշանակել տալու համար «Կասպիի» գլխաւոր աշխատակից Ահմէդ բէգ Աղայեվին։ Թոյլտուութիւնն ստացվեց։ Մէհմէդ աղան, այստեղ, Թիֆլիսում ունեցած իր տպարանը ծախել-ծախծխելուց յետոյ, մի գեղեցիկ օր, ճանապարհ ընկաւ դէպի Բագու։

Անցան դրա վրա շաբաթներ, նոյն իսկ ամիսներ։ «Շարքի-Ռուսը» լոյս չէր տեսնում։ Թուրք լրագրի հրատարակութեան այդ անհասկանալի, խորհրդաւոր յապաղումը շատերին զարմացնում էր։

Վերջապէս խորհուրդը պարզվեց։ Աղա Շահթախթինսկին և Աղայեվ բէգը լուրջ անհամաձայնութեան մէջ էին։ Երկրորդը, յենվելով՝ իր արած երեք հազար բուբլու կանխավճարի վրա, պահանջում էր թերթի ղեկավարութիւնը։ Իսկ առաջինը՝ զինված խմբագրի իրաւունքով, դրականապէս մերժում էր տեղի տալ Աղայեվ բէգին։

Տարաձայնութիւնը այն աստիճան սուր բընաւորութիւն ստացաւ, որ գործը այժմ ընկել է դատարանի։

Ահա հարցի արտաքին երևոյթը։ Սպասելով՝ դատավարութեան ելքին, մենք մտնենք հարցի էութեան մէջ, որը միայն մեզ ցոյց պիտի տայ տարաձայնութեան կարևորութիւնը։

Ի հարկէ եթէ վէճն ունենար սոսկ անձնական, անհատական նկարագիր, մենք մի բոպէ անգամ չէինք զբաղեցնի մեր ընթերցողներին նրանով, և կը թողնէինք, որ թուրք ինտելիգենցիայի երկու ներկայացուցիչները իրանց մէջ կատարէին իրանց կեղտոտ լուացքը։ Բայց պիտի տեսնէք, և գուցէ զարմանքով տեսնէք, որ հարցը ունի հասարակական, և նոյն իսկ խիստ նշանակալից բնաւորութիւն։ Մեր կարծիքով, դա կռիւն է երկու հակընդդէմ ուղղութիւնների, որոնք ձգտում են մահմեդական ազգաբնակութեան վրա գերիշխող դերը գրաւել։ Մէկը թունդ պահպանողական, իսկ միւսը, չը գիտեմ ի՞նչպէս ընորոշել... ասենք, ազատական, բաղդատմամբ առաջինին։ Առաջինի ղեկավարիչն է Ահմէդ բէգը, երկրորդինը՝ Մէհմէդ աղան։

Թէ ի՞նչպէս այդ կը տեսնենք առաջիկայում։

Տ. Զաւէն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Русь» լրագրում կարդում ենք հետևեալը հայոց եկեղեցական կալուածների մասին. «Կովկասի փոխարքան աչքի առաջ ունի, Թիֆլիս հասնելուց անմիջապէս յետոյ, մի յատուկ յանձնաժողով հրաւիրել հայոց եկեղեցական կալուածների առիթով։ Այդ յանձնաժողովի մէջ մտնելու են ադմինիստրացիայի, հասարակական հաստատութիւնների և հոգևորականութեան ներկայացուցիչները, կաթողիկոսի ընտրութիւնով և նրա անձնական մասնակցութեամբ։ Լիակատար յոյս կայ, որ այդ հարցը լուծվի հայերին բաւարարութիւն տուող ձևով»։

—

Ներկայումս Թիֆլիսումն է գտնվում Աստրախանի թեմի առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեան, որ եկել է Թիֆլիս մի քանի օրով։

—

Պետերբուրգի հեռագրական գործակալութեան ասելով, կովկասեան փոխարքային Նորնախիջևանում դիմաւորել է հայկական մի պատգամաւորութիւն։ Լսելով ողջոյնի ճառը, Փոխարքան պատասխանել է, որ կովկասեան ազգութիւնները կը վայելեն համահաւասար իրաւունքներ և խնդրել է հասարակական ոյժերին աջակցել կարգ հաստատելու գործին։ Փոխարքայի ամուսնուն մատուցվեցին ծաղիկներ։

—

Կարող ենք հաղորդել, ասում է «Русь» լրագիրը, որ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը մտադիր է, Թիֆլիս հասնելուց յետոյ, շուտով այցելել այն բոլոր վայրերը, ուր անկարգութիւններ են տեղի ունեցել, ուր հողային հարցն առանձնապէս սուր կերպարանք է ընդունել։—Կովկասի պատուիրակները, փոխարքային այցելութեան գնացած ժամանակ, մատնացոյց էին արել Կովկասում մի բարձրագոյն դպրոցի անհրաժեշտութիւնը և փոխարքան մեծ համակրանքով է վերաբերվել այդ կարևոր հարցին։

—

Մայիսի 23-ին նշանակված է Թիֆլիսի նահանգի և Զաքաթալայի շրջանի անտառային պաշտօնեաների ժողով, որի ժամանակ, բացի սովորական հարցերից, պէտք է քննութեան առնվեն կալուածատէրերի և գիւղացիների մէջ ծագած հողային թիւրիմացութիւնների հարցերը։ Հաստատ սիւնոյն ժամանակում տեղի են ունենալու և միւս նահանգների ու շրջանների անտառային պաշտօնեաների ժողովները։

—

Մայիսի 2-ին վերջապէս համաձայնութիւն կայացաւ Թիֆլիսի ելէքտրաքարշի անօնիմ ընկերութեան և նրա գործադուլ արած ծառայողների մէջ։ Ցերեկվայ ժամը 3-ին ելէքտրաքարշի մի վագոն, դրօշակներով, ծաղիկներով ու կանաչներով զարդարված, դուրս եկաւ քարշակի կենտրօնական պարկից, մէջը լիքը գործադադարներով։ Վագոնն անցնելով Միքայէլեան փողոցով ու Վէրայի կամուրջով, եկաւ Գօլովինսկի պրոսպէկտ, Երևանեան հրապարակ և ապա կրկին Միքայելեան փողոց։ Ուղևորութեան ամբողջ ընթացքում ծառայողները «ուրա»-ներով թնդացնում էին օդը, իբր հաշտութեան աւետում։ Ժամը 3-ից սկսած՝ քարշակն սկսեց կանոնաւորապէս գործել։

—

Վրացի հրապարակախօսները ապրիլի 30-ին «Իվերիայի» խմբագրատանը ժողով էին կազմել պ. Փուրցելաձէի նախագահութեամբ։ Որոշվեց միանալ Պետերբուրգի համառուսական հրապարակախօսների ժողովի որոշումներին և ծրագիր մշակել Թիֆլիսում վրաց հրապարակախօսների մասնութեան համար, որպէս զի յետոյ դա կազմի համառուսական միութեան հետ։ Ընտրվեց մի յանձնաժողով՝ ծրագիրը մշակելու համար։ Յանձնաժողովի անդամները ընտրվեցին—պ. պ. Փուրցելաձէ, Մաչավարիանի, Բցխիլաձէ, Սուրգուլաձէ և Լասխիշվիլի։

—

Ախալքալաք քաղաքում դատարանի դռնփակ նիստում քննվեց Գալուստ Աղաջանեանի գործը, որ մեղադրվում էր ոստիկանական ստրաժնիկի սպանութեան գործում։ Նախագահում էր նահանգական սեսիայի նիստին Կ. Լեմերման. մեղադրեալին պաշտպանում էր երդուեալ հաւատարմատարի օգնական Գ. Խատիսեան։ Դատի էին կանչված նոյնպէս ախալքալաքցի Օհ. Սերոբեան և Սահակ Լիսանեանց ու Աղավրէյ գիւղի բնակիչ Առաքել Զաքարեանց։ Դատարանը արդարացրեց բոլորին։

—

«Echo de Paris» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հեռագրել է իր լրագրին ապրիլի 22-ին. «Կարող եմ պնդել, որ կառավարութիւնը վերջնականապէս վճռել է կազմել ժողովրդական ընտրութեամբ երկու ժողովներ։ Վերին պարլամենտը կազմելու է ներկայ Պետական խորհուրդը, որի մէջ մտնելու են և ժողովրդից ընտրված անձեր. ներքին պարլամենտը բաղկացած է լինելու բացառապէս ժողովրդի ներկայացուցիչներից և կոչվելու է Պետական Խորհուրդ կամ Դումա։ Երկու ժողովն էլ խորհրդակցական նշանակութիւն են ստանալու։ Ընտրութիւնների եղանակը մշակելու է Բուլիգինի յանձնաժողովը։ Հիմք ունեմ պնդելու, որ այդ ժողովները հրաւիրվելու են 1905 թուի հոկտեմբերի 1-ին։

—

Ապրիլի 30-ին Քութայիսի նահանգի Շարապանի աւանի թէ երկաթուղիական և թէ մարդանեցի հանքերի բանուորները գործադուլ արին։

—

Վլադիկաւկազի բոլոր ֆոտոգրաֆիաների ծառայողները մի քանի պահանջներ դրին իրանց տէրերին։ Երբ վերջիններս նրանց պահանջները չընդունեցին, բանուորները գործադուլ արին ապրիլի 23-ին։

—

«Իվերիա» լրագիրը հաղորդում է, որ Ախալքալաքի գաւառի 7 գիւղերի դուխօբորները ժողով արին և հետևեալ որոշումը կայացրին. դաշտերը չը մշակել, ծխախոտ և օղի չը գործածել և վերադարձնել կառավարութեան տուած հրացանները։ (Ամեն մի գիւղի համար կառավարութիւնը տուել էր 10 հատ հրացան)։

—

Բագուից «Бирж. Вѣд.» լրագրին հաղորդում են. «Քաղաքի դրութիւնը բաւական ծանր է։ Կարելի է կարծել, որ սրված յարաբերու-

թիւնները թուրքերի և հայերի միջև շարունակվում են։ Ամեն տեղ զօրքեր են երևում. կազակները անդադար պտտում են քաղաքում, և հասկանալի է, որ կարգը խանգարելու իւրաքանչիւր փորձ անյապաղ կը ճնշվի։ Այստեղ քաղաքական շատ զօրեղ ագիտացիա է լինում։ Բազմաթիւ են կալանաւորվածները։ Զատիկ օրվայ առաւօտեան ժամասացութեանը ուսաց տաճարում մի ինչ որ 17 տարեկան տղայ սկսեց պրոկլամացիաներ բաժանել։ Մեծ սարսափ տարածվեց, և եթէ ժամանակաւոր գեներալ-նահանգապետ իշխան Ամիլախվարիի սառնասրտութիւնը չը լինէր, որը կարողացաւ հանգստացնել ամբոխը, անպատճառ զոհեր կը լինէին։ Դժբաղդ տղային քիչ էր մնում պատառ պատառ անէին. նա այնտեղ և եթ բռնվեց ու պրոկլուրորը հարցափորձի ենթարկեց նրան։ Յայտնվեց, որ նա ծովագնացական դպրոցի նախկին աշակերտ է»։

—

«Разсвѣтъ» լրագրի Թղթակիցը հաղորդում է, որ Մէլիտոպոլում սպանվել են ընդամենը մինչև 75 մարդ, մեծ մասամբ ռուսներ։ Սպանվածների թւում կան երկու զինուոր։ Զինուորների վրա պատշգամբներից գցում էին ձեռքի ռումբեր։ զինուորները պատասխանում էին խմբական հրացանաձգութեամբ։ Ամբոխը կատաղութեամբ իր հաշիւը վերջացնում էր այնպիսի տների հետ, որոնց պատուհաններից և պատշգամբներից հրացանաձգութիւն էր լինում։ Նրանք նիգերով դուրս էին հանում քարեր պատերից, և տները քանդվեցին։ Զորս կողմը ամեն ինչ այրվում էր։ Փողոցներում վազում էին կիսամերկ, խելակորոյս կանայք «փրկեցէք, օգնեցէք» աղաղակներով։ Սպանվածների թւում շատ կան բոլորովին խաղաղ բնակիչներ, որոնք պատահմամբ ընկել էին գնդակների տակ։ Քիչ չեն և ռուս ու հրէայ մանուկներ։ Իսկ «Бирж. Вѣд.» լրագրի Թղթակիցը Ջարդի մասին հաղորդում է։ «Ջարդի մասին լուրերը յամառութեամբ պատում էին, իսկ Եալտայի Ջարդը ցոյց տուեց, որ այդ բանը հնարաւոր է և Մէլիտոպոլում։ Իսպրավնիկը հասկանում էր քաղաքի անպաշտպան դրութիւնը և գօրգօվօյների չնչին քանակութիւնը, և այդ պատճառով քաղաքային վարչութեան հետ միասին դիմեց նահանգապետին՝ խնդրելով ուղարկել գոնէ մի վաշտ զինուորներ քաղաքացիներին խուլիգաններից պաշտպանելու համար։ Քաղաքացիների և ձայնաւորների մասնաւոր խորհրդակցութեան մէջ վճռված էր, բացի դրանից, ինքնապաշտպանութիւն կազմակերպել։ Ինքնապաշտպանութիւնը պարտաւոր էր բարոյապէս ներգործել և զենք բանեցնել միայն ծայրայեղ դէպքերում։ Մարտի 25-ին ինքնապաշտպանութիւնը արդէն կազմակերպված էր, իշխանութիւնը նոյնպէս նախազգուշութեան միջոցներ ձեռք առաւ, և այդ օրը հասաւ հետևակ զօրքի կէս վաշտը։ Հրէական Զատիկը կատարելապէս հանգիստ անցաւ, թէպէտ ազգակցութիւնը կրկին յուզվում էր, թէ ինչու քաղաքային վարչութիւնը նորից խնդրեց նահանգապետին զինուորներ ուղարկել, որով հետև մարտի 25-ին եկած կէս վաշտը հեռացաւ քաղաքից։ Իսպրավնիկը զեկուցեց նահանգապետին, որ ոչ մի բանի համար երաշխաւոր չէ կարող լինել, բայց հետևանքն այն եղաւ, որ երկու նկատողութիւն ստացաւ և հրաժարական տուեց։ Զինուորներ չը տուին, այդ պատճառով վճռված էր ուժեղացնել ինքնապաշտպանութիւնը»։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ Թիֆլիսի տիրացուներից մէկը, այն է Բարսեղ Արէշեանց, գտնվում է մեծ կարօտութեան մէջ։ Նա հիւանդ է և օգնութիւն չունի ոչ մի տեղից։ Նպաստել ցանկացողները կարող են հացնել կարօտեալին Գոնչարովի փողոց, Մաղալովի տուն № 19։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Սրանից 10 օր առաջ 23 տարեկան նոր ամուսնացած Թադէոս Խրտչեանցը անհետացաւ և մինչև հիմա էլ չը կայ. շատերն ասում են, որ ինքն իրան ջուրն է նետել։ Իսկ ամսի 18-ին նոյնպէս քաղաքից անյայտացել է 21 տարեկան Սահակ Սողոյեանցը, որի ծնողները և բարեկամները որոնում են»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 մայիսի

ԲԵՐԴԵԱՆՍԿ, 1 մայիսի։ Ցերեկը և գիշերն անցան բարեյաջող։ Անագին թւով բնակիչներ մեկնեցին։ Տրամադրութիւնը շատ ծանր է։

ՏՕԿԻՕ։ Ֆրանսիայի չէզոքութեան առիթով առաջադէմ կուսակցութեան ներկայացուցիչները խօսեցին արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնեաների հետ, յայտնելով, որ իրանց կուսակցութիւնն այսպիսի ժամանակ չէ կարող լռել։ Իբր պատասխան՝ մինիստրի օգնականը նրանց կարդաց Ֆրանսիայի պատասխանը և աւելացրեց. «Մենք ենթադրում ենք, որ ապագայում Ֆրանսիան խիստ չէզոքութիւն կը պահպանէ։ Բրիտանական կառավարութիւնը մեզ բաւական օգնում է և կատարում դաշնակից ազգի պարտականութիւնները։ Այդ ի նկատի ունենալով, մենք համաձայն չենք այն կարծիքի հետ, որ Ֆրանսիան արդէն կուռող պետութիւն է»։ Յետոյ պատգամաւորութիւնը գնաց առաջին մինիստրի մօտ։ Յետոյ նրանք յայտնեցին, որ լիապէս բաւական են եապօնական կառավարութեան գործունէութեան եղանակից։ Բարձր շրջաններում ենթադրում են, որ ճգնաժամն անցկացաւ, բայց եապօնական ժողովուրդը տրամադիր չէ թոյլ տալ կրկնելու այդպիսի միջնադէպեր։

ՊԱՐԻԶ։ «Նիւ-Եօրկ-Հէրալդ» լրագրին Սէուլից հեռագրում են, որ վերջերս եապօնացիները ափ են հանել 30,000 զօրք Գէնղանում։ Գուկչանում ափ են հանել մեծ քանակութեամբ ռազմամթերք։ Դա ցոյց է տալիս, որ արշաւելու են Վլադիվոստոկի վրա։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Շվէցիայում զօրեղ յուզում է տիրում նօրվէգիական փոխառութեան առիթով, որը, ինչպէս ենթադրում են, նշանակված է բացառապէս պատերազմ մղելու համար Շվէդիայի դէմ։ Շվէդական պարլամէնտի մի յայտնի անդամ ասաց, որ Նօրվէգիան ունի 70 միլիոն կրոն Շվէդիայի դէմ կռուելու համար։

ՍՕՖԻԱ։ Կառավարութիւնը լուր է ստացել որ Սալոնիկի բուլգարական գիմնազիայի տեսուչ Զէնգելովին մի յոյն լուրջ վէրք է հասցրել դանակով։

ՏՕԿԻՕ։ Եապօնական կառավարութիւնը արգելել է ածուխ արտահանել Սայգոն, քանի դեռ ռուսական նաւատորմը գտնվում է Հնդկա-Չինի ջրերում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գենեռալ Լինէվիչի ամենահպատակ հեռագիրները։ 1) Ապրիլի 30-ին. «Ապրիլի 26-ին մեր զօրամասերից մէկը արշաւեց Շիմեացղեի վրա և ցերեկվայ ժամը 12-ին կռիւ սկսեց։ Մի ուրիշ զօրամաս, շարժվելով Նարշանչէնցղիից դէպի Շիմեացղի, լեռնանցքից վայր իջնելով, հանդիպեց թշնամու հրացանի կրակին։ Սրկվեց կռիւը։ Կէս օրվայ մօտ եապօնացիներն սկսեցին թնդանօթ գործ ածել։ Խուզարկութիւնը կատարելով, մեր զօրամասերը յետ քաշվեցին։ 2) Մայիսի 1-ին. «Ապրիլի 19-ին արևելեան Էրդագօու ուղարկվեց մի զօրամաս՝ եասուլ Շէրբակովի հրամանատարութեամբ։ 700 հոգու չափ թշնամին անցած լինելով նրա թիկնակողմը, եասուլ Շէրբակովը քաշվեց դէպի Լիւդեագօհ, բայց երբ օժանդակութիւն ստացաւ, թշնամուն դուրս քշեց Էրդագօուից»։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Թէև այստեղ շատ խիստ չեն նայում Ֆրանսիայի բռնած բարեկամական դիրքին դէպի Ռուսաստանը, սակայն Ֆրանսիայի բացատրութիւնները չէզոքութեան առիթով այստեղ համոզեցուցիչ չերևացին։ Ֆրանսիան Եապօնիայի բողոքից յետոյ ուղարկեց հրահանգներ Սայգոն իր պաշտօնեաներին և մինչև իսկ այդ ժամանակ այդ հրահանգները չը գործադրվեցին։ Ամերիկական ծովագնացների կարծիքով Բօժեստվէնսկին երբէք չէր հասնի Զինական ծովը, եթէ չը լինէր Ֆրանսիայի օժանդակութիւնը։

ԲԵՐԼԻՆ։ «Frankf. Zeit.»-ի Տօկիօի թղթակիցը հաղորդում է, որ եապօնացիները գաղտնի կերպով երկաթուղի են շինում Տօկիօից Կօրէ, երկրի ներսը, որովհետև ծովափնեայ գիծը կարող է յարձակման ենթարկվել ծովի կողմից։ Թղթակիցը դրանից եզրակացնում է, որ եապօնացիները բալտիական էսկադրայից աւելի են վախենում, քան իրանք ցոյց են տալիս։

ՄՕՍԿՎԱ։ Երէկ գիշերվայ դէմ Պետրօվսկի մեծ պարտէզում մանր գողերից մէկը բռնեց մի տիկնոջ։ Կնոջ հետ եղած պարոնը խփեց սրիկային ձեռնափայտով։ Հարիւր մարդ բղաւեցին. «Մեզ ծեծում են։ Խփեր», և սկսեցին հասարակութեան վրայից պոկոտել արժէքաւոր իրերը։ Հաւանօրէն այդ տիկինն ու պարոնն էլ պատկանում են աւազակների խմբին։

ԹԱՒՐԻԶ։ Շահի Եւրոպա մեկնելու նպատակն է բժշկութիւնը Մարիէնբադում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայիսի 1-ին հասարակական կարգը ոչնչով չը խանգարվեց։ Զբօսանքները և հասարակական տօնական հանդէսները սովորական կարգով անցան։ Միայն մի քանի տեղերում բանւորներին չը պատկանող ոչ-մեծ խմբեր փորձեր արին կարգը խանգարել, բայց իսկոյն և եթ խեղդվեցին՝ ոստիկանութեան և աննշան զօրքերի գալով, որոնք ոյժ գործ չը դրին։ Դէպքեր տեղի ունեցան հետեւեալ կէտերում։ Վասիլիեվսկի կղզու մեծ պրօսպէկտում հաւաքվել էին 2 խմբեր, գլխաւորապէս հրէաներ—մէկում մօտ 40, միւսում մօտ 100 հոգի. նրանք փորձում էին յեղափոխական երգեր երգել։ Ցերբակալված են 14 հոգի, որոնցից 6-ը հրէաներ։ Պրեսբրաժենսկի գերեզմանատուն եկան 400-ի չափ մարդ, գլխաւորապէս ուսանողներ և ազատ արուեստի անձեր հրէական ծագումից։ Ցերբակալված են 12 հոգի, որոնցից 5-ը հրէաներ։ Բօրօվի և Գլազովի փողոցների անկիւնում սովորականից աւելի ուսանողներ էին անցուդարձ անում մայթերով, երևի սպասելով որ և է բանի։

3 մայիսի

ՕՐԷՕԼ, 2 մայիսի։ Գիշերվայ 3 ժամին Մոսկվա-կուրսկի երկաթուղու Կուրակինօ—Զմիէվկա պէրէգօնի վրա խորտակվեց ապրանքատար գնացքը։ Զարդվեցին 6 և վնասվեցին 4 վագոններ։ Ճանապարհները բռնված են։ Վնասվածներ չը կան։

ԲԱԳՈՒ։ Պարսկական հիւպատոսութեան կառավարիչը խնդրում է «Каспій» լրագրին տպել, որ պաշտօնական հեռագիր ստացաւ Թէհրանից, որը հերքում է սահմանապահ զօրքի ընդհարման լուրը պարսկական զօրքերի հետ սահմանի վրա Բէլասուվարում։ Սարդար-Նասրուս-Սուլթանը՝ կանչված է Թէհրան պարսկական զօրքը կազմակերպելու համար։—Այսօր, բացի Նօրէլից, գործարաններում և գործատներում բանում են. լրագիրները վաղը կը հրատարակվեն։

ՇՉԻԴՐԻ։ Շչիգրիի գիւղատնտեսական ընկերութիւնը, հարց դնելով գերմանական նոր դաշնագրի ազդեցութեան մասին գիւղատնտեսական արդիւնաբերութեան վրա, որոշեց կոչ անել բոլոր գիւղատնտեսական ընկերութիւններին՝ հարցը միատեղ մշակելու համար և միջնորդել երկրագործութեան մինիստրի առաջ՝ գիւղատնտեսական ընկերութիւնների ներկայացուցիչների համառուսական ժողով հրաւիրելու մասին։

ՆԻԺ-ԵՕՐԿ։ Հեռագիրը Մանիլլայից հաղորդում է, որ գեներալ Վուդ, երկու շաբաթ տեւող արշաւանքից յետոյ, ջնջեց ապստամբների կէսը։ Մնացած 300 մարդիկ շրջապատված են, բայց հրաժարվում են անձնատուր լինել։ Ամերիկացիները կորցրին 7 մարդ սպանված և 17 վիրաւոր։

ՄՕՍԿՎԱ։ Քաղաքային ինքնավարութեան ստորին ծառայողները 1000 ստորագրութիւնով խմբական խնդիր ներկայացրին քաղաքագլխին, որ իրանց թոյլ տրվի միայն խմբանելով ժողովներ կազմելու բանւորների կազմակերպութեան, նրանց իրաւական դրութեան և նիւթական վիճակի մասին մտածելու։—Արտիստ իշխան Սումբատովը առաջարկում է գրական — գեղարուեստական ընկերութեանը հիմնել մի օրինակելի գրական-գեղարուեստական թատրոն—դպրոց և հրատարակել լրագիր։ Թատրոնների անտրպրենէօրները դատ են բաց անում Արքունիքի մինիստրի դէմ աֆիշների տպագրութեան մենաւաճառութիւնից իրանց կրած ջնասները պահանջելով։

ԿԱՄԻՇԻՆ։ Մայիսի 1-ին քաղաքից դուրս ժողով անելուց յետոյ, այսօր գործադուլ արին գլխաւորապէս տախտակ կտրելու գործարանների բանւորները և պահանջում են վարձագնի յաւելում։ Բանակցութիւններ են վարում տէրերի հետ։

3 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրութեանը խնդիր է տրված բանալու երաժշտական օրինակելի բարձրագոյն կուրսեր։ Դասատուները լինելու են Ռիմսկի-Կօրսակովը, Գլազունովը։ Լեադովը, Զիլոտին և Տարտակովը։—«Սլովօ» լրագիրը հաղորդում է, որ Ս. Սինոդի պրօկուրօրի օգնական Սաբլերը նշանակվում է Պետական Խորհրդի անդամ։ Լուրերին նայելով, նրա յաջորդը լինելու է Շիրինսկի-Շախմատովը։

ՏԱՆԺԵՐ, 2 մայիսի։ Տատէնբախը Ֆէց ժամանեց ապրիլի 28-ին և ընդունվեց մեծ հանդիսաւորութիւնով։ Այսօր Ֆէց ուղևորվեց գերմանական մի ուրիշ առևտրական միսսիա։

ԳԻԲՐԱԼՏԱՐ, 2 մայիսի։ Մայիսի 4-ի երեկոյեան կը ժամանէ Ալէքսանդրա թագուհին և կը մնայ 4 օր, ինչպէս որոշված էր մինչև Վիլհելմ կայսրի գալը, որը խանգարեց թագուհու բոլոր ծրագիրները։

ԼՕՆԴՕՆ, 2 մայիսի։ Էդուարդ թագաւորը շվէդական պրինց Գուստաւ-Ադոլֆին շնորհեց Վիկտորիա շքանշանը։

ՊԱՐԻԶ, 2 մայիսի։ Հերքվում է այն լուրը թէ շուտով «Դեղին Գիրք» լոյս կը տեսնէ չէզոքութեան խախտման և մարօկկեան հարցերի մասին։

ՍԱՅԳՕՆ, 2 մայիսի։ (Սեփ. թղթ.)։ Կայացել է արդէն Բօժեստվենսկու և Նեբոգատովի էսկադրաների հանդիպումը։

ԽԱՐԲԻՆ, 2 մայիսի։ Ծովային դէպքերի հետաքրքրութիւնը դրդում է օտար թղթակիցներին և զինուորական գործակալներին իրանց դիտողութիւնների յենակէտները հաստատել ծովափնեայ քաղաքներում։ Հաղորդում են, որ մի քանի օտարերկրեայ թղթակիցներ հեռանում են Մանջուրիայից և գնում Տեանցզին։

ԿԱՆԷԱ, 2 մայիսի։ Կրէտէում խառնակութիւնները սաստիկ զօրացել են։ Հիւպատոսների կոչը չը հանգստացրեց։ Ապստամբները մօտենում են Կանէայէն, ուր կենտրօնացել են զօրքերը, և պահանջում են արքայորդի Գէօրգիի քարտուղարի և մի քանի ուրիշ պաշտօնեաների հրաժարեցումը։

ՏՕԿԻՕ, 2 մայիսի։ Ասում են, որ վերջին 30 օրում ռուսական նաւերը գործ են ածել 120,000 տոն ածուխ։ Անթափանցելի գաղտնիք է մնում, թէ որտեղից են նրանք այդ ստացել։—Ծովային մինիստրութիւնը յայտարարել է, որ բալտիական էսկադրան վերադարձել է Հոնկոնգ ծովացոցը։—Կատաղի փոթորիկի ժամանակ օժանդակ «Նէկկօմարու» կրէյսերը զարկվել է ժայռի Ֆուզանի ծոցի մօտերը և վնասվել է։ Մօլիից ապրիլի 29-ին ժամանած նօրվէգիական մի շոգենաւի ասելով, Կօրէական ջրանցքից հարաւ ապրիլի 28-ին թնդանօթաձգութիւն էր կատարվում առաւօտեան ժամը 8-ից մինչև 11-ը։ Ժամանածները տեսել են եապօնական մի ականանաւ, որը արագ ընթանում էր յիշված վայրի ուղղութիւնով։

ՀՕՆԳԿՕՆԳ, 2 մայիսի։ Սանտականից եկած գերմանական մի շոգենաւի նաւապետը հաղորդում է, որ Բօրնէօի հիւսիսային մասի նահանգապետը տեղեկութիւն է ստացել ապրիլի 26-ին, որ Հայնա կղզու մօտ 9 զրահակիր նաւ են կանգնած, Լաբուանի մօտերը։ Այդ նաւերի ինչ ազգի պատկանելն անյայտ է։—Այստեղ ստացված լուրերի համաձայն՝ բալտիական էսկադրան գտնվում է Սէն-Զօն կղզու մօտը, այստեղից 90 մղոն դէպի հարաւ-արևմուտք։—Մայիսի 1-ին Հօնգկօնգի մօտ նկատվեցին 12 մարտանաւեր անյայտ ազգութեան։ Նաւերն արագ ընթացան դէպի հարաւ-արևելք։ Դրութիւնն անհանգիստ է համարվում։ Ամեն օր սպասում են ճակատամարտի։

ԲԱԳՈՒ, 3 մայիսի։ Գործադուլը նաւթահանքերում դադարեց։ Երէկ քարշակի վագոնների ուղեկցում էին զինուորներ։ Հիւրանոցներում ծառաները դեռ չեն սկսել իրանց զբաղմունքները։—Կուզմինսկու կօմիսիան լայն բացեց դռները իւրաքանչիւր մարդու յայտարարութիւնների համար, առանց պատասխանատուութեան։ Այսօր հրատարակվեցին տեղական լրագիրները։ Գործադուլների աւելանալուց և նաւթի արդիւնահանութիւնը պակասելուց նաւթի գինը շուկայում հասաւ 15 կոպէկի։

ՏՎԷՐ, 2 մայիսի։ Մայիսի 1-ի օրը կատարելապէս հանգիստ անցաւ։ Քաղաքից դուրս մի խումբ ցոյց անողներ միացած մի քանի տասնեակ գործարանային բանւորների հետ, կարմիր դրօշակներ բարձրացնելով, դիմեցին դէպի Տվէրի մանուֆակտուրայի գործարանները։ Դիմաւորվելով բանւորներից, վերջինները ներս չը թողեցին նրանց։ Տեղի ունեցած ընդհարման ժամանակ հրազէններով սպանվեց մի բանւոր և մի քանիսները վիրաւորվեցին, բանւորները վիրաւորեցին նոյնպէս ցոյց անողներից մէկին, որ երդուեալ հաւատարմատարի օգնական էր։

ԿԻԵՎ, 2 մայիսի։ Առաւօտեան 10 ժամին երիտասարդ մարդկանց մի խումբ, ըստ երևոյթին բանւորներ, մտան Կիեվի երկրորդ կայարանը, դիմեցին շոգէարան արհեստանոցները և սկսեցին անհանգիստ շուռներ։ Աշխատանքները կանգ առան, բայց դրանից յետոյ երկաթուղիական ծառայողների և բանւորների միաբան ջանքերով գործադուլ անողների խումբը ցրվեց։ Գործադուլ անողները փախան դէպի Դնէպրի ափը։ Վլադիմիրի արձանի մօտ յանկարծ հաւաքվեց բանւորների մի խումբ, լսվեցին «Եղբայրներ, գնանք»։ Միաժամանակ լսվեց բէմվոլէրի մի հարուած։ Շտապով եկած ոստիկանութիւնը

ցրվեց համախումբը։ Երէկ գործադուլ արեցին հացթուխները։ Բազարներում չը կան հաց և բուլկիներ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ
22 ապրիլի

Բորսայի դիսկոնտը	$5^1/_2$—$6^3/_4$%
Պետական 4% բենատն	84— —
I Խաղար. տոմսերը	380— —
II » »	$292^3/_4$ —
III » »	272— —
Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ.	— — —
Բագուի » » »	— — —
Թիֆլիսի հող. բանկի 5%	— — —
» » » $4^1/_2$%	— — —
Բագուի նաւթ. Ընկ.	402— —
Կասպիական Ընկ.	— — —
Մանթաշեան և Ընկ.	219— —
Նոբէլի և ընկ.	— — —

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ԶԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—19 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ՍԱԼՕՎՕՎ ատամնաբոյժ. 9—11 ժ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԵՐԲԻՆԻՆԱ—$1^1/_2$-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—$7^1/_2$—8 ժ.
Պ. Ա. ԱՐԴԱԶԻԱՆԻ. Կատարում է միկրո-քիմիական և բակտերիոլոգիական հետազօտութիւններ։
Օ. Ա. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

ՎԷՏՑԵԼԻ ԹԱՏՐՕՆ
Կիրակի, մայիսի 8 ին
Պ. ՄԱՐԻԿ
կը ներկայացնէ սեփական բեպէրտուարից առաջին անգամ
ՍԱՏԱՆԱՆ
դրամա 2 գործ. հեղ. Մարիկի
Վերջը
ՄԿԻՃԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ
Պիէսա 1 գործ. հեղ. Ա. Աբէլեանի
Սկիզբն է ճիշդ 9 ժամին երեկոյեան։
Տեղերի գները 3 ր. մինչև 30 կ.
Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ «Վէս» ծխախոտի խանութում (Գօլովինսկ պր.), իսկ ներկայացման օրը թատրօնի կասսայում։
(1, 5, 8) 2—3

Դ-ր Վ. Արծրունի
Մեկնում է Կովկասեան Հանքային Ջրերը—Պեատիգորսկ, որտեղ կընդունէ հիւանդներին Բկի, Քթի ու Ականջի հիւ. համար Пятигорскъ. Верхній бульв. д. кн. Гирей. չ. ո. կ. 4—10

Բժիշկ Ա. Մխիթարեանց
Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական աիտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. երեկոյեան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանօվի, դեղատան կից։ (ա. օ.) 67—80

Գնանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲՐԻՆ»,
Միայն Միխաի։ Լեբեդեվի
«Этикетъ утвержденъ прав.» ժակագրութիւնով։

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։
10, 20,30 12—36

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ - ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ
ԴՊՐՈՑԸ ԿԱՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԸ
ամառը տեղափոխվում է ԿՕԶՕՐ. ընդունում է երեխաներին։
(4, 8, 15, 22) 1—4

Գուտտենբերգ
գրախանութում վաճառվում են.
Սիպրիլի ցոլքեր, (բանաստեղծութիւն.) 50 կ.
Գաբամաճեանի, Առձեռն Նամակների 80 կ.։
Կիւլէսէրեանի, Բ. Քարոզներ 1 ր.։
Տիւմա Ա. Ֆէրնանտ, 1 ր. 50 կ.։
Գ. Ե. Ուրուանկարներ 25 կ.։
Սմբատով Ա. Դաւաճանութիւն թարգմ. Զալալ Տէր-Գրիգորեանցի 50 կ.։
Հայ խօսքի ուսուցիչներ (մեծադիր պատկեր) 1 ր. 50 կ.։
Մանտեգացցա Դ., Հիւանդ սէր 40 կ.։
Կ. Դէոկզօն, Արուեստ հարստանալու և հարստութիւնը պահելու 40 կ.։
Մ. Գիւլզեազեանի, Սմբատի հէքիաթը 60 կ.
Միրքօի, Գործը գործ է պահանջում թարգմ. Ֆրանսերէնից Կ. Զալալեանի 40 կ.։
Լէօի, Ռուսահայոց գրականութեան սկզբից մինչև մեր օրերը 1 ր. 50 կ.։
Յովսէփ կաթողիկոս Արղութեան 60 կ.։
Սունդուկեանի Խաթաբալա 4 գործ. և 6 պատկերով 50 կ.։
Եղիշէի, Պատմութիւն Վարդանանց ըստ անձնագրեացն օրինակի 20 կ.։
Գալէմքարեան Հ. Գ. Ս. Պատմ. հայոց լրագրութեան ի սկզբանէ մեր ժամանակը 1 ր.։
Թերճիմանեան, Հ. Հ. Պատմ. հայոց 50 կ.։
Թորոս Հ. Ց. Վ. Ընտիր Հայկազունք 2 ր. 50 կ.։
1—1

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ
Ս. Գ. Շերմազանեանց
ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6, Երևանեան հրապարակ, տուն Արղութեան, լուսանկար Լալայեանցի բնակարան։

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԻՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինօվսկայա փողոց № 8։ (ե.ո.) 80—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Կը վերադառնայ արտասահմանից Պետերբուրգ մայիսի 10-ին և այդ ժամանակից կը սկսէ իր ընդունելութիւնը։ Հասցէն՝ Ելիզավետինսկի փողոց, ռուսաց մայր եկեղեցու յետև, տուն Արխիպովի։ (ո. ե.)

Կովկասում տպագրական գործով զբաղված անձանց փոխադարձ օգնութեան ընկերութեան
ԳՐԱՍԵՆԵԱԿԸ
գտնվում է Թիֆլիսում, Տուրգէնէվսկայա փողոցի վրա, № 11 տան մէջ, և բաց է կիրակի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը։
7—10

Զգուշացիք կեղծումներից
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ
Դեղագործ
Ի. Ֆ. ԻՒՐԳԷՆՍԻ
Ոչնչացնում է պղուկները, այրվածքները, դեղին բծերը, ուռոյցքները և ազդում է աւելորդ քրտնաբերութեան վրա. ոչնչացնում է վատ հոտը։ Ցանձնարարվում է իբր տուալէտի անուշահոտ սապօն բարձրագոյն տեսակի։
Ոսկէ մեդալ Լօնդօնում 1893 թ.
Կտորի գինը 50 կ., 1/2 կտորը 30 կ.։ Ծախվում է բոլոր ամենալաւ դեղատներում, դեղապահեստներում և անուշահոտութիւնների խանութներում։
Բոլոր Ռուսաստանի համար գլխաւոր պահեստը Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում։ (4, 19) 10—24

Այս յայտարարութիւնը տպված է «Правитель. Вѣстникъ»-ի № 43/1903 թ.։

Մի հայ օրիորդ
լաւ ընտանիքից ցանկանում է բօննայի պաշտօն ունենալ. գիտէ և լաւ տնտեսութիւն. կարող է և հիւանդի ուղեկցել։
Պայմանների մասին դիմել այս հասցէով. Ростовъ на Дону, почта лит. Ж. М. до востребованія. չ. ե. հ. 3—3

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկ. Վարչութիւնը
սրանով յայտարարում է պ.պ. բաժնետէրերին, որ 1904 թ. դիվիդենտի վճարումը ամեն մի պային 42 ր. 50 կ. տեղի կունենայ ընկերութեան գրասենեակում ամենայն օր ցերեկվայ ժամը 12-ից մինչև 1-ը։ (չ. հ. ու.) 1—3

ԱՂԱԶՈՒՄ ԵՆՔ
տեղեակ անձանց յայտնել մեզ փռնչի Էրզրումի Քղի գաւառի Սեղանք գիւղացի Մարտիկ Յակովբեան Պարոյեանցի (35 տար.) ուր գտնվելը, որը 1903 թուի օգոստոսի 10-ին 2 Արշակ և Միսաք ընկերներով անցել է Օլթիից սահմանը դէպի հայրենիք, սակայն Շիպակ գիւղում տաճիկ կառավարութիւնը բռնելով տարել է Էրզրում, որտեղից յետ են քշել դէպի ռուսաց սահմանը և բերելով մինչի Բաշգիւղի մօտերը չէ իմացվում ինչ են եղել, նրանց մասին ոչ մի տեղեկութիւն չունենք ոչ մենք և ոչ նրանց ընտանիքը. մեր հասցէն՝ Кизляръ, въ пекарню Мартикъ Аковбяна.
(ա. օ.) 5—10

Վարձով է տրվում
ապահովութեամբ կամ ծախվում է
տիկ. Ե. Մուսեղեանի
ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆԸ ԿԱՐՍ ՔԱՂԱՔՈՒՄ
Հիմնարկութիւնը գոյութիւն ունի 1880 թուականից, արժանացել է նուէրների և վայելում է քաղաքացիների բարեհաճ վերաբերմունքը։
Պայմանների մասին դիմել տիկ. Ե. Մուսեղեանին, իր Թիֆլիսի լուսանկարչատունը, Դվօրցովայա փողոց, տ. վրաց ազնվականութեան։ (չ. ո. կ.) 5—10

Կիրակի, մայիսի 8-ին, առաւօտեան ժամը $10^1/_2$-ին Թիֆլիսի քաղաքային տան դահլիճում կայանալու է
Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան
ԺՈՂՈՎԸ
Ժողովի զբաղմունքի առարկաներն են.
1) Այժմեան կանոնադրութեան փոխելը։
2) Բարեգ. ընկերութեան. Զրի ճաշարանի և յանուն Յով, Խուդադեանի որբանոցի 1904 թ. հաշիւները և նոյն հիմնարկութիւնների նախահաշիւները։ (Որբանոցի նախահաշիւի վերաբերեալ վարչ. անդամ Ա. Մէլիք-Այվազեանցը մեց առանձին կիրճիքի և խնդրեց վարչութեան առաջարկել ընդ. ժողովին իր կազմած նախահաշիւը ի քննութեան)։
3) Վերաստուգող յանձնաժողովի զեկուցումը։
4) Վարչութեան 3 անդամների, 3 փոխանդամների և վերաստուգող յանձնաժողովի 3 անդամների ընտրութիւնը։
Անդամ կարելի է գրվել ընկերութեան գրասենեակում Абасъ-Абадская пл. տուն բարեգործական ընկերութեան, առաւօտեան ժամը 10—2-ը։ Անդամավճարն է 5 ր.։ 2—6

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՆԻ
Շեքեղ պատկերազարդ հրատարակութեան
հեղինակութիւն Լէօի
Բովանդակութիւն. Ուղևորի տպաւորութիւններ.—Անիի և շրջականների տեղագրութիւն.—Բագրատունիների թագաւորութեան սկիզբը և անկումը, ընդարձակ տեսութիւն.—Անիի անցեալը։
Ստուար հատոր, զարդարված 100-ից աւել պատկերներով և բազմաթիւ զարդանկարներով ու օրնամենտներով, որոնք ընդօրինակված են Անիի քանդակներից։ Առանձին՝ Մայր Եկեղեցին, մեծադիր, գունաւոր պատկեր, գործ ճարտարապետ պ. Թորամանեանի։
Գիրքը կը տպագրվի արտասահմանում։
Բաժանորդագինն է 5 բուբլի։
Կարելի է վճարել և մաս-մաս.—գրվելիս 2 բուբլի, իսկ մնացած 3 բուբլին մինչև գրքի լույս տեսնելը։
Գրվել կարելի է Թիֆլիսում, 1) «Մշակի» խմբագրատանը (Редакція «Мшакъ»), 2) «Գուտտենբերգ» գրավաճառանոցում։ (Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“.)

Ս. Պետերբուրգի մեքենայական արդիւնագործութեան ընկերութեան
ԱՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵԻ, ԿԱՆԱՆՑ, ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԵՐԵԽԱՆԵՐԻ
ԿՕՇԻԿՆԵՐ,
նոյնպէս և սկօրօխօդներ ու սանդալներ կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդրկովկասի միւս քաղաքներում ԱՄԵՆԱԼԱՒ վաճառատներում.
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ.
Խնդրվում է ուշք դարձնել ֆաբրիկայի նշանի վրա։

„ԼԷՕՊՕԼԴ ՆԷՅՇԵԼԷՐ“
Առևտրական տան պահեստում կայ ընտրութեան համար մեծ քանակութեամբ ռուսական եւ արտասահմանեան արդիւնագործութեան
ԿԱԶՈՒԵՂԷՆԻ ՍՊՐԱՆՔՆԵՐ
Տելէֆոն № 346. 81—63 Երևանեան հրապարակի վրա։

Дозволено цензурою. Тифлисъ, 3-го мая 1905 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» բնկ. Электропечатня типографскаго Т—ва „Гермесъ“. Мад. ул. № 15.